ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

«ԱԽՈՒՐՅԱՆ - ԱՐԱՔՍ - ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆ

ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ
ВОДНОГО ХОЗЯЙСТВА
ПРИ МИНИСТЕРСТВЕ
СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
" АХУРЯН – АРАКС-ДЖРАР"

ДИРЕКТОР

377760, ք.Արմավիր, փ.Երևանյան 30
Հեռախոս / ֆաքս /0237/ 2 – 77 – 27
Էլ. հասցե AXURYAN-ARAQS-JRAR11@mail.ru

377760, г.Армавир, ул.Ереванян 30
Телефон / факс: /0237/ 2 – 77 – 27

Թիվ 19- 15

«16» 03 2015թ.

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով
շրջանակային համաձայնագիր միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
բոլոր Մասնակիցներին

ՀՐԱՎԵՐ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ Սննդամթերքի ձեռքբերման

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ախուրյան–Արաքս-ջրառ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել 2015թ. I և II կիսամյակներում ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով մրցույթի շրջանակներում կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված սննդամթերք:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում N «ՀՀԳՆՋՏՊԿ-ԱԱՋ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7 »:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Արմավիր Երևանյան 30 հասցեով, մինչև 2015թ. մարտի 26-ը, ժամը՝ 12:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ս. Թութունջյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Արմավիր Երևանյան 30 հասցեում, 2015թ. մարտի 26-ին, ժամը՝ 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման (որը կազմված է՝ 42 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկաների մասնագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N 5)*, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N 5.1)*: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ axuryan-araqs-jrar11@mail.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և /կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և /կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և /կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և /կամ տվյալները:

Պատվիրատու՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ:

Տնօրեն՝ *Է. Սարգսյան*

Հեռ. 0237-2-77-27.
Բջջ. 094-04-07-80

Հավելված 5
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N «ՀՀԳՆՁՏՊԿ-ԱԱՋ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7 » ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ .

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ -ի կողմից N «ՀՀԳՆՁՏՊԿ-ԱԱՋ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7 » ծածկագրով հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից հայտարա-
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
րարված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2. համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

«____» _____ 20___թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N «ՀՀԳՆՁՏՊԿ-ԱԱՁ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7 » ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնի առաջարկ

Ուսումասիրելով Ձեր կողմից տրամադրված N «ՀՀԳՆՁՏՊԿ-ԱԱՁ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7 ». ծածկագրով ընթացակարգի հրավերը, (ծանուցումը) այդ թվում, կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գների:
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

(ՀՀ դրամ)

Չափա-բաժիննե րի համարնե ը	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

**3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

Ցուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ ֆանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

նախագիծ

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՀՀԳՆՋՏՊԿ-ԱԱՋ-ՇՀԱՊՁԲ-11/2- 15/7- »

Ք. Արմավիր « » « » 2015 թ.

Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ , ի դեմս տնօրեն Է. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և <<_____>>-ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված Սննդամթերք (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ջնջել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են, սակայն ոչ ուշ 2015թ. դեկտեմբերի 30-ից:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Այն դեպքում, երբ <Գնումների մասին> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չեն կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N N 1,2,3 և 4 հավելվածները բաղկացած _____ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Ախուրյան - Արաքս - ջրառ» ՓԲԸ

Ք. Արմավիր, փ. Երևանյան 30

/անվանումը, հասցեն/

ՀՀ 24119000780700

«Յունիբանկ» Արմավիրի մ/ճ

/սպասարկող բանկը/

ՀՎՀՀ 04417934

Հեռ. /0237/ 2-77-27

էլ. փոստ AXURYAN-ARAQS-JRAR11@mail.ru

Տնօրեն _____ *Է. Սարգսյան*

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Տնօրեն _____

Կ. Տ.

Հավելված N 1

«   » «   » 2015թ. կնքված

N «ՀՀԳՆՋՏՊԿ-ԱԱՉ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7   »

ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2015թ. համար անհրաժեշտ սննդամթերքի

Կազմակերպության անվանումը

«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Միս /տավարի/	Տավարի կիսամսեղիքով, պխտակավորված, ընդհանուր ճանկի 20%-ից ոչ ավելին 2-րդ կարգի տավարի միս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
2	Կարտոֆիլ	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը` 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը` առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
3	Բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.
4	Կարագ	Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված
5	Լոլիկ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը` ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
6	Վարունգ	Վարունգ թարմ, օգտագործման տեսակի, անվտանգությունը` ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
7	Պղպեղ /քաղցր/	Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
8	Պղպեղ /կծու/	Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
9	Սմբուկ	Սմբուկ թարմ: Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
10	Բանան	Բանան թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63 մմ ներառյալ): Անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
11	Խնձոր	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի”և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
12	Նարինջ	Նարինջ թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63մմ ներառյալ): Անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” 13և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

13	Կիտրոն	Թարմ վիճակով
14	Պանիր Զանախ	Սպիտակ աղաջրային պանիր, կովի կաթից, 36-40% յուղայնությամբ: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
15	Գազավորված ըմպելիք կոկա կոլա 2լ.	2լ.պոլիէթիլենային« տարաներով, գործարանային արտադրության, փաթեթավորված
16	Գազավորված ըմպելիք ֆանտա 2լ.	2լ.պոլիէթիլենային« տարաներով, գործարանային արտադրության, փաթեթավորված
17	Ջուր /պոլիէթիլենային տարայով 0.5լ./ր	Խմելու աղբյուրի ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած, շշալցված տարողությամբ պոլիմերային շշերում: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
18	Կոնֆետ /շոկոլադապատ/	Կարամելաթթային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, հնձակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով:Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսակներով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդհոդվածի:
19	Լավաշ	Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
20	Հաց մատնաքաշ	Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
21	Կանաչի խառը	Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին՝ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
22	Կանաչ սոխ	Կանաչ, թարմ, առանց փչացած ու չորացած մասերի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
23	Գլուխ սոխ	Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
24	Սեղանի աղ	Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:
25	Նշի կուտ	Փաթեթավորված, չոր վիճակով
26	Զամիչ	Փաթեթավորված, գույնը դեղին
27	Ընկույզ	Փաթեթավորված, չոր վիճակով
28	Հնդկական կաղին	Փաթեթավորված, չոր վիճակով
29	Պնդուկի միջուկ	Փաթեթավորված, չոր վիճակով
30	Քաղցր կարկանդակներ	Փաթեթավորված, թարմ
31	Արևածաղկի ձեթ	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
32	Իշխան ձուկ	Թարմ ամբողջական 0.7-ից մինչև 1 կգ զանգվածով, հայկական ծագման սև իշխան:
33	Պահածոյացված զեյթուն	Ոչ փափուկ վիճակով, պահածոյացված, թիթեղյա տարաներով
34	Կետչուպ	Արտադրողի տեխնիկական պայմանների համաձայն, լուծվող չոր նյութերի զանգվածային մասը ոչ պակաս 21 %, ընդհանուր խմբաքանակի 70 %-ը կծու, 30 %-ը՝ քաղցր տեսակի, բաղադրությունը՝ տոմատի մածուկ, շաքարավազ, աղ, սոխ, սխտոր, պղպեղ (կծու տեսակի դեպքում) համեմունքներ: Պահպանման ժամկետը ոչ պակաս 12 ամիս: Պարունակությունը՝ 100 գրամում ածխաջրեր 10-18, սպիտակուցներ 1.5, էներգետիկ արժեքը 56-88 կկալ:
35	Սխտոր	Սովորական տեսակի, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենիտեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի

36	Թեյ	Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
37	Շաքարավազ	Սպիտակ գույնի, սորուն, խաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
38	Ձմերուկ	Հասած, թարմ վիճակով
39	Սեխ	Հասած, թարմ վիճակով
40	Սուրճ	Բնական բոված, դարչնագույն փոշի, հատիկների կեղևի ներառումով, համը դուրեկան, տարբեր երանգներով (թթու, դառը, տոխպ և այլն), բույրը նուրբ և վառ արտահայտված առանց կողմնակի համի և հոտի, խոնավության զանգվածային մասը՝ բողարկման ժամանակ՝ 4 %-ից ոչ ավելի, պահման ժամկետի ընթացքում՝ 7%-ից ոչ ավելի: Կոֆեինի զանգվածային մասը հատիկավոր և աղացած սուրճում՝ 0,7%-ից ոչ պակաս, աղացվածքի մեծությունը՝ N 095 մաղով անցնող սուրճ 98,5%-ից ոչ պակաս «թուրքական» սուրճի համար և 90,0 %-ից ոչ պակաս մնացած սուրճերի համար: Կողմնակի խառնուկների ներկայություն չի թույլատրվում:Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
41	Մարմալադ	Թարմ վիճակով, փաթեթավորված
42	Լոխում	Թարմ վիճակով, փաթեթավորված
	Մատակարարումը	**Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Երևանյան 30 հասցեում**

* Ապրանքների տեղափոխումն իրականացնում է մատակարարը:

ԳՆՈՐԴ

«Ախուրյան - Արաքս - ջրառ» ՓԲԸ
ք. Արմավիր, փ. Երևանյան 30
/անվանումը, հասցեն/
ՀՀ 24119000780700
«Յունիբանկ» Արմավիրի մ/ճ
/սպասարկող բանկը/
ՀՎՀՀ 04417934
Հեռ. /0237/ 2-77-27

էլ. փոստ AXURYAN-ARAQS-JRAR11@mail.ru

Տնօրեն _____ *Է. Սարգսյան*

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Տնօրեն _____

Կ. Տ.

Հավելված N 2
« » « » 2015թ. կնքված
N «ՀՀԳՆՈՒՏԿ-ԱԱՋ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7 »
ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2015թ համար անհրաժեշտ սննդամթերք

(ՀՀ Հազ. դրամ)

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել II եռամսյակում		Նախատեսվում է գնել III եռամսյակում		Նախատեսվում է գնել IV եռամսյակում		Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	Սննդամթերք										
1	Միս տավարի	կգ.		70		74		74		**218**	
2	Կարտոֆիլ	կգ		45		50		50		**145**	
3	Բրինձ	կգ.		15		16		16		**47**	
4	Կարագ	կգ		3		3		4		**10**	
5	Լոլիկ	կգ.		46		49		50		**145**	
6	Վարունգ	կգ.		40		40		40		**120**	
7	Պղպեղ /քաղցր/	կգ		6		8		8		**22**	
8	Պղպեղ /կծու/	կգ.		6		8		8		**22**	
9	Սմբուկ	կգ		6		7		7		**20**	
10	Բանան	կգ		37		38		38		**113**	
11	Խնձոր	կգ		37		39		39		**115**	
12	Նարինջ	կգ		26		27		27		**80**	
13	Կիտրոն	հատ		16		17		17		**50**	
14	Պանիր Զանախ	կգ		8		8		9		**25**	
15	Գազավորված ըմպելիք կոկա կոլա/2լ/	շիշ		24		24		24		**72**	
16	Գազավորված ըմպելիք ֆանտա /2լ./	շիշ		24		24		24		**72**	
17	Ջուր /պոլիէթիլենային տարայով 0.5լ/	շիշ		240		240		220		**700**	
18	Կոնֆետ /շոկոլադապատ/	կգ		15		16		16		**47**	
19	Լավաշ	կգ		41		42		42		**125**	
20	Հաց մատնաբաշ	կգ.		51		52		52		**155**	
21	Կանաչի խառը	կապ		21		23		23		**67**	
22	Կանաչ սոխ	կապ		22		22		22		**66**	
23	Գլուխ սոխ	կգ		3		3		4		**10**	
24	Սեղանի աղ	կգ.		12		12		12		**36**	
25	Նշի կուտ	կգ		1.5		1.5		2		**5**	
26	Զամիչ	կգ		3		3		4		**10**	

27	Ընկույզ	կգ		1.5		1.5		2		5	
28	Հնդկական կաղին	կգ		1.5		1.5		2		5	
29	Պնդուկի միջուկ	կգ		1.5		1.5		2		5	
30	Քաղցր կարկանդակներ	հատ		33		33		34		100	
31	Արևածաղկի ձեթ	շիշ		3		3		4		10	
32	Իշխան ձուկ	կգ.		16		17		17		50	
33	Պահածոյացված զեյթուն	բանկա		6		7		7		20	
34	Կետչուպ	հատ		6		7		7		20	
35	Սխտոր	կգ		1.5		1.5		2		5	
36	Թեյ	տուփ		3		3		4		10	
37	Շաքարավազ	կգ		3		3		4		10	
38	Ձմերուկ	կգ		20		60		20		100	
39	Սեխ	կգ		20		60		20		100	
40	Սուրճ	կգ		1.5		1.5		2		5	
41	Մարմալադ	կգ		3		4		4		11	
42	Լոխում	կգ		3		4		4		11	
Ընդամենը				X		X		X		X	

ԳՆՈՐԴ

«Ախուրյան - Արաքս - ջրառ» ՓԲԸ
Ք. Արմավիր, փ. Երևանյան 30
/անվանումը, հասցեն/
ՀՀ 24119000780700
«Յունիբանկ» Արմավիրի մ/ճ
/սպասարկող բանկը/
ՀՎՀՀ 04417934
Հեռ. /0237/ 2-77-27
էլ. փոստ AXURYAN-ARAQS-JRAR11@mail.ru

Տնօրեն _____ *Է. Սարգսյան*

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Տնօրեն _____

Կ. Տ.

Հավելված N 3
« » « » 2015թ. կնքված
N «ՀՀԳՆՋՏՊԿ-ԱԱՋ-ՇՀԱՊՁԲ – 11/2-15/7 »
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2015թ. համար անհրաժեշտ սննդամթերք

(%-ով)

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում			Ընդամենը
		II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6
	Սննդամթերք				
1	Միս տավարի	33%	66%	100%	100%
2	Կարտոֆիլ	33%	66%	100%	100%
3	Բրինձ	33%	66%	100%	100%
4	Կարագ	33%	66%	100%	100%
5	Կոլիկ	33%	66%	100%	100%
6	Վարունգ	33%	66%	100%	100%
7	Պղպեղ /քաղցր/	33%	66%	100%	100%
8	Պղպեղ /կծու/	33%	66%	100%	100%
9	Սմբուկ	33%	66%	100%	100%
10	Բանան	33%	66%	100%	100%
11	Խնձոր	33%	66%	100%	100%
12	Նարինջ	33%	66%	100%	100%
13	Կիտրոն	33%	66%	100%	100%
14	Պանիր /չանախ/	33%	66%	100%	100%
15	Գազավորված ըմպելիք կոկա կոլա/2լ./	33%	66%	100%	100%
16	Գազավորված ըմպելիք ֆանտա /2լ./	33%	66%	100%	100%
17	Ջուր /պոլիէթիլենային տարայով /0.5լ/	33%	66%	100%	100%
18	Կոնֆետ /շոկոլադապատ/	33%	66%	100%	100%
19	Լավաշ	33%	66%	100%	100%
20	Հաց մատնաքաշ	33%	66%	100%	100%
21	Կանաչի խառը	33%	66%	100%	100%
22	Սոխ կանաչ	33%	66%	100%	100%
23	Գլուխ սոխ	33%	66%	100%	100%
24	Սեղանի աղ	33%	66%	100%	100%
25	Նշի կուտ	33%	66%	100%	100%
26	Ջամիչ	33%	66%	100%	100%
27	Ընկույզ	33%	66%	100%	100%
28	Հնդկական կաղին	33%	66%	100%	100%
29	Պնդուկի միջուկ	33%	66%	100%	100%
30	Քաղցր կարկանդակներ	33%	66%	100%	100%
31	Արևածաղկի ձեթ	33%	66%	100%	100%

32	Իշխան ձուկ	33%	66%	100%	100%
33	Պահածոյացված զեյթուն	33%	66%	100%	100%
34	Կետչուպ	33%	66%	100%	100%
35	Սխտոր	33%	66%	100%	100%
36	Թեյ	33%	66%	100%	100%
37	Շաքարավազ	33%	66%	100%	100%
38	Ձմերուկ	20%	80%	100%	100%
39	Սեխ	20%	80%	100%	100%
40	Սուրճ	33%	66%	100%	100%
41	Մարմալադ	33%	66%	100%	100%
42	Լոխում	33%	66%	100%	100%
	Հնգամեկը				100%

- *Վճարման ենթակա գումարները ներկայացված են առոդական կարգով*

ԳՆՈՐԴ

«Ախուրյան - Արաքս - ջրառ» ՓԲԸ

Ք. Արմավիր, փ. Երևանյան 30

/անվանումը, հասցեն/

Հ/Հ 24119000780700

«Յունիբանկ» Արմավիրի մ/ճ

/սպասարկող բանկը/

ՀՎՀՀ 04417934

Հեռ. /0237/ 2-77-27

էլ. փոստ AXURYAN-ARAQS-JRAR11@mail.ru

Տնօրեն _____ *Է. Սարգսյան*

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 4
« » « » 2015թ. կնքված
N _____ պայմանագրի հավելված

Վաճառող	Գնորդ
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N__
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդ՝ ի դեմս _____ և Վաճառողը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Մատակարարումների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------	----------	----------

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց	Մատակարարումները ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

N *«ՀՀԳՆԶՏԴԿ-ԱԱջ-ՇՀԱՊՁԲ*-11/2-15/7 »

Ք. Արմավիր <<____>>____________ 20 թ.

<<......................>> -ն, ի դեմս Ընկերության տնօրեն __________________, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀԳՆԶՏԴԿ «Ախուրյան-Արաքս-ջրա« ՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Սննդամթերքի ձեռքբերման» N «ՀՀԳՆԶՏԴԿ-ԱԱջ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7 » ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «Սննդամթերքի ձեռքբերման» N «ՀՀԳՆԶՏԴԿ-ԱԱջ-ՇՀԱՊՁԲ-11/2-15/7 » գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ __________թվերով______________________________տառերով__________________________) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանում>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<.Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանում>> -ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից մինչև 20_____թ. ____________-ը ներառյալ::

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

Մասնակցի անվանումը (անունը)

(հասցեն)

(բանկ)

Հ/Հ --

ՀՎՀՀ --